

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲԱՏԵՂԵԱՅ

(ՆԱԽ ՔԱՆ 1524)

1933ին, առիթով մը, ՀարգՖրերո, Քըն-դիրէդ, Հանդիպելու՝ աչքէ անցուցի նաեւ CASE MEMORIAL LIBRARY-ի Հայերէն ձեռագիրներու փոքրիկ հաւաքածոն, քսանի մօտ ձեռագիրներէ բաղկացած, որոնք այս մատենադարանին համար ձեռք բերուած էին հանդուցեալ Փրոֆ. Անանիականէ, երբ իբր փոխ-գրադարանապետ կը պաշտօնավարէր հոն: Որքան որ դիտեմ, ասոնք ձեռք բերուած էին Մեծ Եղեռնէն վերջ, Կիլիկիոյ մէջ: Այս ձեռագիրներուն մէջ էր նաեւ անյիշատակարան խառնիխուռն վերակազմուած փոքր հատոր մըն ալ, հաւանաբար Ժէ. Դարսոյ վերջերս գրուած, որովհետեւ հոն կային Ժէ. Դարէն երկու տաղերու արտադրութիւններ ալ: Այն ատեն դժբախտաբար չկրցայ, ժամանակէս կարճութեան պատճառաւ, արտայրէն Երուսաղէմի հին նկարադրութիւն մը, որ ուշադրութիւնս դրաւ: Տեղս վերադառնալէ քանի մը ամիս վերջ խնդրեցի մատենադարանապետ Charles Snow Thayer-է որ ՀարգՖրերոն ինծի զրկէր իրենց հաւաքածոն հինգ տարբեր ձեռագիրներ, որոնք մեծ աղնուութեամբ զրկեց եւ ես կրցայ լրակատար օգտուիլ: Այդ հինգ ձեռագիրներուն մէջ էր նաեւ ՀարգՖրերոյ վերոյիշեալ մատենադարանին թիւ A 95-200 հայերէն ձեռագիրը, որուն մէջ կը գտնուէր Երուսաղէմի նկարադրութիւնը, դժբախտաբար վերակազմութեան ատեն թերթերու նախկին շարքը խանդարուած եւ թերթերը ետ ու առաջ խառնիխուռն վերակազմուած տպու կաղապարէ մը:

Նախ հոս տամ խորագիրը. «Այս է ամենայն տնօրինականք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի սուրբ եւ յաստուածարեակ մայրաքաղաքն Երուսաղէմ որք կան հաւաքեալ աստ ի Թողութիւն մեզաց հաւատով

երկրպագողաց հաւատացելոցն Քրիստոսի աստուծոյ մերոյ աւրհնելոյն ի բարձունս»:

Այս խորագրով Սուրբ Տեղեաց նկարադրական գրութեան մը կը հանդիպինք Վիեննայի Միխիթարեան հաւաքման թիւ 170 Ոսկեփարիկ - Հաւաքածոյ ձեռագրին մէջ, որ քստ Երջանկայիշտակ Հայր Տաշեանի ցուցակին կը սկսի թուղթ 109ր եւ կ'աւարտի 119ր, եւ վերջաւորութեան ունի գրչէն սա յիշատակութիւնը. «Գրեցաւ ձեռամբ մեղաւորիկ եւ անաբան Կարապետի ի յանապատո Սաչիկ հոգեւորի ընդ հովանեաւ Սր. Աստուածածնի եւ Սր. Վարդանուցա ամէն»: Իսկ յաջորդ էջին՝ «Թ՛վին, ՋԶԳ (1524) Մայիսի ԺԹ (19) եւ Քրիստոս փառք յաւիտեան» (Տաշեան, Ցուցակ, էջ 485-486): Այս Կարապետ զրիչը որմէ վեց ձեռագիր հասած է մեզի 1503ին սկսելով, զրեւ սկսած է իմ հաւաքմանս թիւ 57 Շարականը 1530ին եւ սակայն առանց աւարտել կարենալու մեռած է: Ուրեմն տարակոյս չի կրնար ըլլալ Վիեննայի թիւ 170ին՝ 1524ին ըլլալուն մասին:

Դարձեալ Վիեննայի Միխիթարեան հաւաքածոյին մէջ կայ երկրորդ օրինակ մը, թիւ 757, գրուած 1797ին, սակայն պակասաւոր: Կը խորհիմ որ ըլլալու էին բազմաթիւ օրինակներ այս առաջնորդող նկարադրականին, գտնուով այն մեծ թիւէն Հայ ուխտաւորներուն՝ որոնք Երուսաղէմ ուխտագնացութեամբ կ'այցելէին: Ինչպէս որ այսօր դժուար ընկնելու համար պատրաստուած կան առաջնորդող տեղագրութիւններ, պատմական ծանոթութիւններով ընդելուզուած, տարակոյս չկա: որ անցեալին ալ, շատ կանուխէն, ըլլալու է՝ Երուսաղէմի եւ Սուրբ Տեղեաց առաջնորդող - տեղագրութիւնները: Անմիջապէս աւելցնեմ որ ասոնք վանքերու

ցուցակագրութիւններ, չէին 634ին, ձևափոխութիւններ (վաճակա՝ Մամիկոնեան), ձալ, վանակա՝ նինա, ցուցակին պէս եւ ոչ ալ անոնք գիտական ուսումնասիրութիւններ են վանքերուն մասին՝ տղարացեալ Մկրտիչ Եպօ. Աղանուն Նիի պատրաստած «Հայկական Հին Վանքեր եւ Եկեղեցիներ Սուրբ Երկրի մէջ» ուսումնասիրութեան նման (Երուսաղէմ, տպ. 1931): Սուրբ Տեղեաց առաջնորդող-տեղադրական ընտիր դործ մըն է իմ ձեռագրաց հաւաքման թիւ 126ը, գրուած Երուսաղէմ 1683ին եւ հեղինակութիւնն է Սարգիս Եպիսկոպոսի: Այս երկար աշխատութենէն մասեր հրատարակեցինք ժամանակին «Սինն»ի մէջ, ուր սակայն տեղ չգտան այն բազմաթիւ տաղերը որոնք Սարգիս Եպիսկոպոսի գիրքին են: Գունգէ օր մը կարելի ըլլայ ամբողջ դործը եղածին պէս հրատարակել իր ընդարձակ եւ մեր ձեռագրական հարստութեան մէջ եղակի հանգամանքով:

Արդ, դառնալով «Այս են ամենայն տընորինականք...» գրութեան, հոս կը հրատարակեմ դայն՝ միայն սղագրութիւնները պարզելով:

* * *

Ճնախ եւ առաջին քաղաքն Նազարէթ աղբիւրն, ուր Գարբիէլ Հրէշտակապետն դաւեախս ետ սուրբ կուսին, եւ յղացաւ ըդքանն աստուած: Եւ տուն Յովսէփայ աստուածահօր ուր սնաւ Քրիստոս, որ է փառաւոր տաճար: Եւ ժողովարան հրէից ուր ընդ (ձեռագրին վերակազմութեան ընթացքին ետ ու առաջ խառնուած է թերթերու շարքը: Հոս կու տամ փակագծով ձեռագրին մէջ պահուած էջաթիւը: Յ. Ք. էջ 23ա) Թերցաւ Քրիստոս զԵսայիայ մարգարէն:

ՃԵԼ արտեւան լերին ուր դահալէժ արարին հրէայքն զՅիսուս, եւ օղն խոնարհեալ ընկալաւ դտէրն մեր: Եւ Կանայ Գալիլիացոց եւ հարսանիսն ուր Քրիստոս զՂուրն ի գիրն փոխարկեաց: Եւ լեռն Թաբոր ուր զաստուածութիւնն յայտնեաց Քրիստոս աշակերտաց իւրոց: Եւ հանդէպ նմին լեռն Հերմոն: Եւ ի մէջ երկուց լեռանց տեղին ուր քարոզեաց Քրիստոս ժողովրդեանն: Եւ տեղին ուր ընդ յառաջ եղին տեառն ժողո-

վորդքն քաղում, եւ հայր դիւանարին աղաղակեաց վանն բռնկութեան որդոյն: Եւ քաղաքն Նային ուր զմիածօր որդի կնոջն յարոյց Քրիստոս:

ՃԵԼ յեղր Տիբերիական ծովուն տեղին ուր զԱլիլիքոս եւ զԱնդրէաս կոչն (էջ 23բ) աջ Յիսուս յառաքելութիւն: Եւ տեղին ուր Յակոբոս եւ զՍահանէս զորդիսն Չերթիա, կոչեաց Քրիստոս: Եւ տեղին ուր զԵ հազար կերակրեաց Քրիստոս, Ե (5) հազար կերակրեաց Քրիստոս, Ե (5) նկանակաւ: Եւ տեղին ուր զԴ (4) հազարն կերակրեաց Քրիստոս, է (7) նկանակաւ, եւ Բ (2) մկամր: Եւ տեղին ուր երեւեցաւ Քրիստոս յետ յարութեան յեղր ծովուն, իբրեւ ելին աշակերտքն տեւին կարկանդէ կայանկանք ծակ մի վերայ եւ հա՛ց (այսպէս): Եւ Կափառնաւմա, ուր զհարիւրապատի ծառայն բռնեաց Քրիստոս: Եւ ջրհորն Յովսէփայ զոր իլուցին եղբայրքն եւ յետոյ հանեալ վաճառեցին յեղիպոտոս: Եւ պատկեր տիբերիոյ որ է փափուկ իբրեւ զմարմին եւ զբրտունք իմանէ: Եւ կայ յայնկոյս ծովուն ուր ըղդիւհաւարն բռնեաց Քրիստոս, եւ զերկու Թ (1000) խոզն ի ծովն ընկղմեաց հանդերձ դէ (էջ 1ա) ւօքն: Եւ տեղին ուր դտան բորտոսն սրբեաց Քրիստոս, եւ մինն միայն դարձաւ տալ փառս աստուծոյ եւ ինքն էր հեթանոս:

ՃԵԼ ի Սամարիայ բանան ուր զՅովհաննէս զԱլիստեցին: Եւ ջրհորն ուր Յիսուս ջուր խնդրեաց ի կնոջն Սամարացոյ, վաստակեալ ի ճանապարհէն նստաւ անդ: Եւ տեղին ուր եկին Յովսէփ եւ Աստուածածին յերուսաղիմայ, եւ ոչ գտին զՅիսուս, յորժամ երկուտանանմանայ տարան ի տաճարն, եւ անդէրն դարձաւ յերուսաղէմ, եւ գտին ի տաճարին զի վիճէր ընդ վարդապետսն:

ՃԵԼ գիւղն Եմաւուս ուր փրկիչն Քրիստոս զնաց ընդ Կղեպեանս, եւ ետ ծանօթութիւն ի բեկանել հաց: Եւ յԱրմաթմ, ուր կայ գերեզմանն Սամուէլի մարգարէին: Եւ յերկիրն Հրէաստանի, քաղաքն (էջ 1բ) Դաւթի Բեթղաւէմ, որ է փառաւոր եւ գերահռչակ սաճաւն: Եւ անդ է այլն յորում ծընաւ փրկիչն մեր Քրիստոս յամէնաւորհեալ կուսէն Մարիամայ, եւ անդ է մատնն անբանից ուր խանձարօք պատեցաւ Քրիստոս:

«Եւ անդ է նշխար⁴ նախամօրն Եւսոյի: Եւ ի մէջ տաճարին աւագ խորանն Յոճայ: Եւ ախպորմն խորանին տեղիք թլփատուութեան Քրիստոսի, որ է սեղանն Հայոց աղբիւն: Եւ յահապ կողմն խորանին տեղիք նշխարաց ծանկանց Բեթղաճմի, որք կոտորեցան վասն Քրիստոսի որ է սեղանն Վրաց աղբիւն: Եւ կայ ի մէջ տաճարին, Մ (50) սին մարմարեայ, և մէկ սեղան վերայ խաչ կայ Նիսրեայ՝ ձեռամբ Սուրբ Լուսաւորչին զոր այժմ Լուսաւորչի սին կոչեն: Եւ ի գլուխ սեան Բ (2) կողմն, Բ (2) պղնձէ խաչ կայ բեւեռեայ, (էջ 36ա) ասեն այն տաշղիշն են է որ զՔրիստոս լուացին: Եւ անտի յառաջ մազարան, ուր սուրբ աստուածածին Քառասուցն պահեաց ռ Եւ անտի մայր տեղիք Հովուացն, ուր Հրեշտակէ երեւեցան Հովուաց, և ետսն զաւետիս վաւրն ծննդեանն Քրիստոսի: Եւ անտի վայր իսկ մի, անուն սուրբ Գէորգայ զօրավարին, և կայ շղթայքն որով կապեցին ըդ սուրբ Գէորգ: Եւ տունն Արիւթարայ քահանային ուր Դաւիթ զհաջն առաջաւորութեանն եկեր: Եւ տեղին ուր այլ աղբիք դասարանին բերին: Եւ ի ճանապարհին Բեթղաճմի դերեղման Հոաքելի մօրն Յովսէփայ, ուր ծնաւ զԲեթիսմի և մեռաւ: Եւ անդ ի յառաջ միտք մի սուրբ Եղիայի, ուր Հրեշտակ (էջ 36բ) ուր բնակեցաւ Յովաննէս ամս Իթ (29): Եւ ի ճանապարհին Գաղայ աղբիւրն ուր Փիլիպպոս առաքեալն զներքինին մկրտեաց, և Հոգին սուրբ իջաւ անդ: Եւ Գաղայ Հրեշտակապետ եկեղեցին որ է վանք Հայոց աղբիւն: Եւ անտի վայ Բերթոն քաղաքն որ է Հարաւակողմն, ուր կայ գերեղման Աբրահամու, Սառայի, Սահակայ, Յակոբայ, և այլոց նահապետաց: Եւ ծառն Մամբրէի որն տէրն, երկու Հրեշտակօք երեւեցաւ Աբրահամու և ընկալաւ ի տան իւր, և է քառ աւետիս վասն ծննդեանն Սահակայ: Եւ տեղին ուր տէրն առաքեաց զՀրեշտակն ի Սողոմ և ի Գոմոր:

Եւ Յայնեռն ուր Յովաննէս մկրտութիւն առնէր: Եւ անտի յառաջ զէմ յարեւելս Սրգեանի Յորդանան, ուր մկրտեցաւ Քրիստոս: Եւ յայնկոյս Յորդանանու բլուրն է (էջ 7էբ) Եղիայի ուր կառօք վերացաւ յերկինս: Եւ յայս կոյս վանքին Յովաննու Մկրտչին ուր ինքն բնակէր յորժամ մկրտութիւն առնէր: Եւ այլ ի վեր վանքն սուրբ Հօրն Ջոսիմոսի զոր ոմանք առիւծի վանք ասեն: Եւ անտի վեր Գաղգաղայ ուր Յեսու զորդին Իսրաէլի թլփատեաց: Եւ անտի յառաջ ՅԵրեքով, և անդ է տունն Ջաքէի ուր տէր մեր Քրիստոս եմուտ ինդ Ջաքէի, և եկեր ընդ նմայ: Եւ ժանտաթղենին որ ել Ջաքէ տեսանէլ զՔրիստոս: Եւ է անտի վեր աղբիւր Եղիայի մարդաբէին: Եւ անտի վեր անապատըն, ուր Քրիստոս որոնեաց Խ (40) օր, և ապա կամաւ քաղցեաւ, և մատաւ սատանայ փորձել զՔրիստոս: Եւ անդ ի վեր լեւորն փորձութեան, ուր հհա՛ սատ (էջ 75ա) անայ զտէրն, և եցոյց նմա զամենայն փառս աշխարհի: Եւ անտի վայր տունն կուրբերուն, որք աղաղակէին որդի Դաւթի Յիսուս ողորմեայ մեղ: Եւ անտի վեր յէմն, ուր նստաւ Քրիստոս ի Հանդիստ: Եւ անտի վեր տեղին ուր ընդ յառաջ եղեն Քրիստոսի բորքն Ղաղարու Մարդայ և Մարիամ: Եւ գիւղն Բեթանիայ. ուր կայ դերեղման Ղաղարու ի մէջ եկեղեցոյն: Եւ տեղին ուր եկաց Քրիստոս և ձաջնեաց Ղաղարու: Եւ անտի վեր տունն Սիմոնի բորտին ուր տէր մեր զօծումն ընկալաւ: Եւ անտի վեր զիւղն Բէյթ Բաղէ, ուր կայր կապեալ էջն և աւանակն: Եւ տեղին ուր առաքեաց Յիսուս ածել զէջն և զյաւանակն: Եւ տեղին ուր նստաւ յաւանակն: (էջ 75բ) Եւ անտի կողմն Հիւսիսոյ, լեռն Գալիլիայ, ուր տէրն մեր ժամադիր եղեւ աշակերտացն, յետ յարութեան անդ երեւեցաւ նոցա: Եւ ի մէջ Գալիլիայ և Համբարձմանն, տեղին ուր Գաբրիէլ Հրեշտակապետն զԴարբին երբ սուրբ կուսին Մարիամու: Եւ ետ զաւետիս վասն վերայփոխման իւրոյ: Եւ տեղին Համբարձմանն Քրիստոսի, որ է փառաւոր տաճար: Եւ ի մէջ տաճարին յէմն օտտաւեղացն Յիսուսի: Եւ անտի վայր դերեղման Պղեղես

⁴ Թլփատութեան տեղոյն Հայոց պատկանելութեան հոս է որ առաքին ազգամ կը խանդավառ: Այլուր այս մասին վկայութիւն չեն գտնուիր:

պրոնիկին: Եւ անտի յառաջ տեղին ուր «ըզ-
 չայր մեր որ յերկինս» ուսոյց աշակերտաց
 իւրոց: Եւ անտի յառաջ ուր զինն երանու-
 թիւն ուսուց: Եւ տեղին սւր զխորիսի մե-
 դու, եկեր Քրիստոս աշակերտօքն (էջ 76ա)
 Հանդերձ յաւուր Համբարձման: Եւ անտի
 յառաջ մէջն ուր նստաւ Քրիստոս յանդիման
 տաճարին: Եւ անտի վայր յայրն յորում
 թաղեան առաքելքն, յորժամ գտէր մեր
 կալան: Եւ զառիվայր լերինն Ձիթենեաց,
 ընդ որ տէր Քրիստոս յաւանակաւ էջ: Եւ
 տեղին ուր կայր նրստեալ սուրբ Աստուա-
 ծածին եւ լայր, յորժամ հրեայքն զսուրբ
 Ստեփաննոս քարկոծէին: Եւ պարտեցն ուր
 այօթեաց Քրիստոս: Եւ քարայրն ուր կալան
 զՔրիստոս: Եւ մէջն յորում ձգեաց (էջ 76բ)
: Եւ տեղին ուր առաքելքն միճակ
 արկին, եւ ել միճակն Մատաթեայ եւ Հա-
 մարեղաւ ընդ մեծաոսան առաքելայն: Եւ
 տեղին ուր սուրբ Աստուածածնի այօթէր:
 Եւ տունն Յոհաննոս աւետարանչին ուր Հա-
 աքեցա՞, սուրբ առաքելքն Քրիստոսի, ի
 փոխումն սուրբ Աստուածածնին, ուր ա-
 ւանդեաց զմաքուր Հոգին ի ձեռն միտմին
 որդւոյ իւրոյ, քանդի ինեալ Քրիստոս փը-
 կիչ մեր, ի փոխումն մօր իւրոյ: Եւ անդ է
 սիւնն ուստի լուր բղխեաց յաւուր սօնի
 տառն ընդառաջէն: Եւ անդ է միւս սիւնն
 սուրբ Աստուածածնին ունելով ի գերկն իւր
 զմարմնացեալ աստուածն վաճ մեր: Եւ
 տեղին ուր աստուած զՀոգն առեալ եւ ստեղծ
 զԱղամ: Եւ տեղին ուր առաքելքն միճակե-
 ցին զաշխարհս ի քարոզութիւն սուրբ աւե-
 տարանին: Եւ մերձ սուրբ Սիոնի վանք Հա-
 յոց սր. Փրկիչ, եւ անդ է կաթարիչ մէջն
 դեր (էջ 55ա) եղմանին Քրիստոսի. անդ է
 եւ բանտն ուր զՔրիստոս եղին եւ կապեցին
 ի սիւնն: Եւ տեղին ուր Պետրոս ուրացաւ եւ
 Հաւ խաւեցաւ: Եւ անդ ի վայր տեղին ուր
 ընդ յառաջ ելին Հրէայքն եւ կամէին յա-
 փշտակել զմարմին տիրամօր Աստուածած-
 նին, յորժամ առաքելքն տանէին ի ձորն
 Գեթսեմանի ի թաղել. եւ Ասիոնիայ քահա-
 նայն յանդգնեցաւ զձեռն ի դազալ տիրա-
 մօրն եւ իսկոյն Բ (2) ձեռն յարմկացն Հա-
 տան: Եւ տեղին Հատալմանն Պետրոսի: Եւ

քաղաքն սուրբ Երուսաղէմայ մերձ դրանն
 սուրբ Հրեշտակապետք որ է վանք Հայոց,
 որ է տուն Անայ քահանայապետին. անդ եւս
 նախատեցին զՔրիստոս: Եւ կապեցին ի ծա-
 ոքն ձիթենի. եւ իւրեք թիւրոց Հրեշտակ
 իշխն ի վերայ ծառոյն: Եւ անտի յառաջ մեծ
 վանք Հայոց սուրբ Յակոբ. անդ է գլուխ
 սուրբ Յակոբայ որդոյն Ջեբելիայ, եղբայր
 Ոհաննոս (էջ 55բ) աւետարանչին, եւ այն
 է աթոռ աեռունեղբոր Յակոբայ եւ այժմ է
 միճակ եւ աթոռ Հայոց ապղին: Եւ կայ ի
 մէջ եկեղեցոյն Բ (2) քարինք, զոր ասեն թէ
 ի խնդրոյ Աստուածածնին բերեալ Հրեշտա-
 կաց ի լեռն Սինայոս: Եւ անտի յառաջ
 տեղին ուր տէրն զԹուժաւ վաճառեաց Ար-
 քանէս վաճառակտին, որ է վանք Ասորոց:
 Եւ անտի յառաջ տեղին ուր պատահեցաւ
 Քրիստոս իւղաբեր կտանց յարուցեալ ի
 մեռելոց, որք կալած զոտան նորա եւ երկիր
 սլապին նմայ: Եւ անտի յառաջ տեղին ուր
 տէրն Քրիստոս զգոհանալն Հրամայեաց:
 Եւ յարեւմտից կողմն քաղաքն Երուսաղե-
 մայ, տեղին ուր իշխանեցան թագաւորք
 մօպուցն, եւ Հաբցանէին վասն ծննդեանն
 Քրիստոսի: Եւ անտի յառաջ խաչավանդ որ
 է Վրաց ապղին, զի ասեն ոմանք թէ յորժամ
 զսուրբ խաչն Քրիստոսի տանէին աղցն Պար-
 սից, անդ եղին մինչեւ դնացին: Եւ Հանդէպ
 քաղաքին Երուսաղէմայ, եկեղեցի (էջ 55ա)
 մի յանուն անաղձաթ բժշկացն Կողմայի եւ
 Դամիանոսի, եւ են անդ եղեալ սուրբ մար-
 մինք նոցա: Եւ Հիւսիսային կողմն քաղա-
 քին Երուսաղէմայ, տանն Դաղիէլի օրհնու-
 թուց վարդապետին, ուր կայ գերեզման սըր-
 բոյն Ստեփաննոսի: Եւ տեղին ուր տէրն եւ
 զղատարակն զեւպանացն Արքայաւոս թագա-
 ւորին: Եւ յարեւելից կողմն քաղաքին սուրբ
 Երուսաղէմայ, է դուռն ողորմութեան ի դէմ
 Համբարձմանն Քրիստոսի ընդ որ տէրն Քրի-
 ստոս քառասուն օրեայ եմուս ի տաճարն,
 զոր ինքնին քացաւ, զոր փակեալ էր Նզեկիէ
 մարզաբէն բանիւ ի Բաբելոնէ: Եւ միւս
 դուռն Բնեամենի ընդ որ տէրն Քրիստոս
 յաւանակաւ եմուս ի քաղաքն Երուսաղէմ:
 Եւ առաջի դրանն տեղին ուր քարկոծեցին
 զսուրբն Ստեփաննոս: Եւ անտի վայր զուրն

Երեմիայի փառաբերէին: Եւ մերձ գրանն առնին Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին (էջ 56բ) որ է Կիսկաւոր տաճար: Եւ մերձ նորին, է արագ զոր էջ (58) ամեայ անգամաւորոյն թժշկեալք Քրիստոս: Եւ անտի յառաջ ապարանքն Հերովդէի զոր սպիտակ Հանդերձ պէցուցին Քրիստոսի: Եւ մերձ նմին, ուր զփուշ պտակն եղին ի զլուխ Քրիստոսի: Եւ մերձ նորին կամար ձորայ վերայ տէրն Քրիստոս քարոզեաց. եւ երբու սեաւ քարինքն սպիտակացան: Եւ մերձ նորին տունն տեստես կնոջն, որ է եկեղեցի: Եւ անտի յառաջ տեղին, ուր ըզ Սիմոն Կիւրիսացին կարան պահակ խաչին Քրիստոսին եւ դուռն զեղեցիկ տաճարին ուր Պետրոս եւ Ոհաննէս զկաղն թժշկեցին: Եւ անուն Պրիլատոսի ուր դատաւարտեցին զՔրիստոս: Եւ տեղին քարայտաակ ուր նստաւ Պրիլատոս եւ լուսջ զձեռն սակով թէ ճեմ անպարտ եմ յարենէ դորա: Եւ զփրկիչն պան Գաբեալ ետ ի ձեռն Հրէից զի խաչ հանեցին: Եւ տեղին ուր զկարմիր հանդերձն զպէցուցին, եւ ապա տարան ի խաչ հանել: Եւ ի դուռն յարութեան տեղին ուր Սիմոն զիսալափայտն եղ, եւ Յիսուս առեալ ել ի Գողգոթայ (էջ 57ա) ի խաչ ելանել: Եւ կայ Դ (է) եկեղեցի ի դուռն Յարութեան, ի ներքոյ Գողգոթային տեղին ուր սուրբ Աստուածածին կայր. եւ արտասուէր ընդ դէմ խաչի, որ է եկեղեցի Հապաշից: Եւ զին նորա հըրեշտակապետ, որ է եկեղեցի Ուստոց: Եւ անտի յառաջ տեղին ուր Ոհաննէ աւետարանիչն կար. եւ արտասուէր որ է եկեղեցի Հայոց: Եւ կայ ի մէջ եկեղեցւոյն մասն մի այն սիւնէն զՔրիստոս կապեցին: Եւ ընդ դէմ նորա տեղին ուր իւղարեր կանայքն կային ի Հրէաստանէ: Եւ հայէին որ է եկեղեցի Հռոմայ: Եւ է Յարութեանն մեծ եւ զարմանալի, որ թէ Ճմ (100,000) մարդ մտան է ներս շրջուի շնորհօքն Քրիստոսի: Եւ կայ ի ներս փրկագործ տնօրէնութիւն Քրիստոսի աստուծոյ մերոյ:

Ճնախ եւ առաջին տեղին Գողգոթայ, ուր խաչեցաւ Քրիստոս եւ հաշտեցուց զհայր ընդ արարած: Եւ առաջին նորա պատուած վէմն: Եւ սեղանն ուր Աբրահամ եհան զոր-

դին իւր փրկահակ պատարանդ տեսուծոյ: Եւ փոխանակ Սահակայ խոյն կախեցաւ: Եւ անն Ուրեկայն է Եր միւս սեղանն ուր Մելքիսեդեկ պատարանդեաց: Եւ միւս այլ սեղան ուր Յան կորն է կոնէպին Զատեր տանդեալք (էջ 57բ) Կանգնեալ յերկրէ յերկինս: Եւ դուռն արտառած ի զլուխ տանդխտոյն, եւ ի ներքոյ Գողգոթային նշխարք նախահօրն Ալամայ, որ է Վրաց ազգին: Եւ կայ անդ գերեզման Մեթրիսեդեկ քահանային: Եւ անտի յառաջ տեղիք պատանքայ Քրիստոսի, ուր զտէրն մեր օծին Յովսէփ եւ Նիկողիմոս: Եւ անտի յառաջ խորանն Հապաշ ազգին: Եւ անտի յառաջ սեղանն Ասորոց: Եւ յարեմտից կողմն սնարից դուպային որ է սեղան Ուստոց: Եւ յարեւելից դրան գերեզմանին զանձանակն: Եւ յաջ կողմն խաչ պատուհանն: Եւ ի մէջ տաճարին աստուածընկալ սուրբ գերեզմանն Քրիստոսի աստուծոյ մերոյ, որում լոյսն ճառագայթի: Եւ ճախ կողմն գերեզմանին Քրիստոսի, շնչահան ուր Լուսաւորիչն է աղօթի: Եւ ի վերայ գերեզմանին դուպայ ի վերայ լուստակ քարակ մարմարեայ սընճրուն: Եւ պարտէղն ուր Մարիամ Մաղդաղենացի ետես զՔրիստոս ի կերպարանս պարտիղային: Եւ անտի յեկեղեցին Փռանկաց, որ անուն սուրբ Աստուածածնին կառուցեալ: Եւ կայ ի ներս մասն միայն սիւնէն որ ըզ Քրիստոս կապեցին: Եւ անտի յառաջ բանտն որ եղին զՔրիստոս: Եւ անտի յառաջ ուր զծիրանին (էջ 58ա) ըզպեցուցին: Եւ անտի յառաջ տեղին ուր զինուորքն զհանդերձն բաժանեցին եւ ի վերայ պատմուճանին վիճակ արկին: Եւ առաջ խորանն Յուդաց ի մէջ Յարութեանն: Եւ ի վերայ խորանն խորան սուրբ Լուսաւորիչն որ է մեծ սեղան Հայոց ազգին զոր Լուսաւորիչ անդր պատարապեալ է, եւ կացեալ ամս է (7): Եւ անտի վայր խաչ գիւտն, ուր զսուրբ խաչն Քրիստոսի դառն: Եւ ունի Յարութիւն, տասներկու դուռ, եւ մէկ դուռն երաշխարութեան զոր սուրբ Աստուածածինն երաշխաւոր եղէ առ միածինն իւր, վառն պրոնիկ Մարիամին, եւ ապա եմուտ ի Յարութիւն: Եւ ընդ դէմ գերեզմանին Քրիստո-

սի, վերնատունն Հայոց, փառաւոր եւ զեղեցիկ զարդարեալ ընդդէմ Գողգոթային: Եւ յետ Յարութեան զան(գա)կատունն (էջ 58ր) փառաւոր եւ զեղեցիկ եւ բարձր եւ անհրման եւ էր է (7) տաղաղայն եւ Բունի, ԼԸ (38) յուսմուտ, եւ ի բոլոր յուսմուտներուն ՃԼԴ (134) միւս մարմարեայ: Եւ ներքին տաղաղայն եկեղեցի անուն Յովհաննու աւետարանչին: Եւ զմաս ի լեառն Մինսկան տեղին ուր ետես Մովսէս զմորենին վառեալ եւ ոչ այրէր, եւ խօսեցաւ աստուած ընդ նմա, ի մորենոյն: Եւ լեառն զոր ել Մովսէս եւ էառ զարէնքն աստուծոյ զրեալ մատամբ աստուծոյ ի տախտակն քարեղէնան: Եւ վէճմըն որ եմուտ Մովսէս տեսանել զաստուած, նա վէճն ի հայ էառ, որ երեւի տեղին մինչեւ զայսաւր: Եւ այլ տեղիք ճգնաւորաց, եւ կուս (էջ 59ա) անաց է անդ, եւ տընօրէնութեանց աստուծոյ: Եւ անտի էջ յեղիստոս, զի յորժամ էառ Յովսէփ զՄարիամ եւ զմանուկն Յիսուս, եւ էջ յեղիստոս հրամա-

նաւ հրեշտակին աստուծոյ, եւ եկին մինչեւ ի մերձ քաղաքին, ք զիւղ մի որում անուն Մաթարիայ կոչի, եթող տխրամայրն զմանուկ Յիսուս անդ, եւ ինքն զնաց ի զեօղն ճուր խաղրել եւ ոչ ետուն, իբրեւ զարձաւ ետես ճուր բղխեալ յոգնատեղաց փրկին, անուշաւամ եւ լաւ: որ է մինչեւ զայսաւր:

«Եւ այլ տեղիք տընօրէնութեան Քրիստոսի շատ կայ յերկիրն յեղիստոս: Եւ տեղիքն մի այլ որում Ճամհայ կոչի, եւ Մաղթառ ասի, եւ յինի մեծ աշխարհաժողով, յաւուր Համբարձմանն Քրիստոսի, եւ երեւի (էջ 89բ) Աստուածածին որպէս զուր ունեւրով ի գիրկն իւր զմխածինն: Եւ զան ամենայն սուրբ յերկրպաղութիւն սուրբ Աստուածածնին եւ միածնի իւրոյ առաքեալքն էւ մարգարէր, կուսա՞ք եւ ամենայն սուրբ եւ եթէ ոք հայցէ զսուրբ ոք տեսանել. երեւի նմայ զարմանալի տեսեամբ. ի փառս աստուծոյ մերոյ յաւիտեանս ամէնն» (էջ 60ա):

Հրատարակեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ